ԱՊԱՇԽԱՐՈՒԹՅՈՒՆ

Ապաշխարությունը եկեղեցու խորհուրդներից է, որի ժամանակ իր մեղքերը խոստովանող անձը, ներում է ստանում քահանայից՝ անտեսանելիորեն մեղքերի թողություն ստանալով Տեր Հիսուս Քրիստոսից:

Ապաշխարողը գիտակցում է իր մեղքերն ու զղջում դրանց համար՝ դրանք խոստովանելով Աստծու եւ Եկեղեցու առջեւ:

Ապաշխարողին առաջարկվում է ճիշտ ուղու վրա դնել իր կյանքը, հավատալ Քրիստոսին ու հուսալ նրա ողորմությանը:

Խոստովանության ժամանակ ապաշխարողը կարդում է հատուկ «Զղջման» վերնագրով մեղաների շարքը, ուր թվարկվում են բոլոր հնարավոր մեղքերը:

Նրանք, ովքեր ցանկանում են ստանալ այս խորհուրդը՝ պետք է նախապես պատրաստվեն դրան՝ պահեցողությամբ, ծոմապահությամբ ու աղոթքով: